ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22 mrgashen.kotayq@mta.gov.am

թիվ 83
01 մարտի 2018թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ.ԳՈՒԼՈՅԱՆ

Հարգելի պարոն Կ. Գուլոյան

Ի պատասխան Ձեր 2017 թվականի ապրիլի 14-ի թիվ 01/ 15.1/1607-17 գրության Ձեզ ենք ուղարկում Մրգաշեն համայնքի ղեկավարի փետրվար ամսվա որոշումները:

Առդիր 3 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՐԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մրգաշեն համայնք 1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«01» փետրվարի 2018 թվականի N 14

ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով, հաշվի առնելով քննարկվող հարցի հրատապությունն ու անհրաժեշտությունը՝ *որոշում եմ.*

2018թ. փետրվարի 5-ին ժամը 11-ին հրավիրել Մրգաշեն համայքի ավագանու արտահերթ նիստ՝ քննարկման դնել հետևյալ հարցերը.

1. Մրգաշեն համայնքի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին
2. Մրգաշեն համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 48-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՐԱՄՅԱՆ

2018թ. փետրվարի 01
գ.Մրգաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08 » փետրվարի 2018 թվականի N 15

ՀԵՐՍԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին » 2002թ. դեկտեմբերի 26-ի ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի, ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հերսիկ Հարությունի Ղազարյանի ընտանիքին հատկացված է եղել 0.52հա գյուղ. նշանակության վարելահող 0220-0004 ծածկագրով, սեփականության վկայական թիվ 09122015-07-0040, սակայն նշված հողամասը իր կողային չափերի մեջ կազմում է 0.5367հա ուստի նրա կողմից օգտագործվող 0.0167հա հողամասը չի գերազանցում նրան հատկացված հողամասի 20%-ը և չի գտնվում 60 հոդվածով սահմանված հողերի ցանկում չի առաջացնում սերվիտուտ *որոշում եմ*.

1. Ճանաչել Հերսիկ Հարությունի Ղազարյանի, Նվեր Սոսիկի Ղազարյանի, Նունուֆար Ջիվանի Ղազարյանի, Շուշանիկ Նվերի Ղազարյանի և Սոս Նվերի Ղազարյանի սեփականության իրավունքը ըստ քարտեզում և հատակագծում նշված կողային չափերի արդյունքների, 0220-0004 ծածկագրով փաստացի օգտագործվող 0.0167հա մակերեսով հողամասի նկատմամբ:
2.Կատարել համապատասխան ուղղում ըստ գեոդեզիստ քարտեզագրողի կողմից ներկայացված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2018թ. փետրվարի 08
գ.Մրգաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» փետրվարի 2018 թվականի N 16

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով և համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 48-Ն որոշմամբ՝ և հիմք ընդունելով Կարինե Մուրադյանի և Սանասար Անինյանի դիմումները՝ *որոշում եմ.*

Կարինե Մուրադյանին և Սանասար Անինյանին սոցիալական հատուկ արտոնություններ բյուջեի ծախսեր 4729 հոդվածից հատկացնել դրամական օգնություն հետևյալ չափով

1. Մուրադյան Կարինե	65 000/վաթսունհինգ հազար/ դրամ
2. Անինյան Սանասար	100 000/մեկ հարյուր հազար/ դրամ
Ընդամենը	165 000 (մեկ հարյուր վաթսունհինգ հազար) դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2018թ. փետրվարի 22
Մրգաշեն